

19րդ ՊԱՐԻ ՆՅԱՆԱԿՈՐ ԳԻՆՏԵՐԸ

Ծ Ա Ղ Կ Ի Պ Ա Տ Ո Ւ Ա Ս Տ

Չ. — Ծաղկի պատուաստի գիւտի մասին խօսելուց առաջ, արժէ խօսիլ ծաղիկ հիւանդութեան մասին :

Ծաղիկը ջերմով եւ դուրս տալով սկսող մի վարակիչ հիւանդութիւն է, որը յառաջ է գալիս մի մասնաւոր ժահրից (virus variolique), մարմնի վրայ գոյանում են կենտրոնական մասում փոսացած խաղաւարաներ (pustule) : որոնց մէջ նախապէս լցւում են թափանցիկ մի հեղուկ, յետոյ այդ հեղուկը փոխւում է թարախի, եւ որը չորանալով իր գոյացած տեղում թողնում է աւելի կամ նուազ երկարատեւ մի փոս :

Թւում է, որ այս հիւանդութիւնը հիներին շատ ծանօթ չէր. 10րդ դարում ապրող մի արաբացի բժիշկ (Rhagès) խօսած է առաջին անգամ այդ հիւանդութեան մասին, եւ նրանից յետոյ ծաղիկը Եւրոպայում մեծ կոտորածներ է պատճառած :

Ծաղիկը պատահում է ամեն տարիքի մէջ, սակայն աւելի յաճախ է պատահում չափահասներին քան թէ երեխաներին, որովհետեւ երեխաները ընդհանրապէս ծնւելուց յետոյ պատուաստւում են : Ինչպէս ասացինք, այս հիւանդութիւնը վարակիչ է. վարակումը տեղի է ունենում երբեմն ուղղակի, հիւանդից անցնում է նրան շրջապատողներին. երբեմն էլ անուղղակի, եւ յաճախ գոյանում է վարակիչ կենտրոնից շատ հեռու մի վայրում : Այս բանը տեղի է ունենում, նրա համար, որ վէրքի չորացած կեղեւը մանր մասնիկների վերածւելով, երկար ժամանակ պահպանւում են շորերի եւ հիւանդի սենեակի մէջ, որտեղից իրանց թեթեւութեան շնորհիւ մթնոլորտի միջոցով փոխադրւում են հեռու տեղեր :

Այս հիւանդութիւնը մի տեղում պատահելիս, հարկաւոր է զգուշութիւններ ձեռք առնել, վարակումը չը տարածելու համար :

Սրա համար պէտք է հիւանդին առանձնացնել. այսինքն թոյլ չը տալ, որ առողջ մարդիկ մօտենան հիւանդին, մանկ նրա սենեակը, դորձածել նրա ձեռք դպցրած ամանները եւ շորերը : Տնեցիներից միայն մէկը պէտք է վարէ հիւանդապահի պաշտօնը, եւ հիւանդի առողջանալուց յետոյ, նրա հետ ենթարկուի դէզէնֆէկցիայի եւ ապա մտնի առողջների մէջ : Եթէ անկարելի լինի (տնտեսական եւ այլ պատճառներով) մի առանձին հիւանդապահ ունենալ, այն ժամանակ տնեցիներից մէկը կը

վարէ այդ պաշտօնը հազին ունենալով մի մասնաւոր երկայն շապիկ , որը հիւանդի սենեակը մտնելիս պէտք է հազնէ , իսկ դուրս գալուց հանէ եւ այնտեղ թողնէ . դուրս գալուց առաջ հարկաւոր է ձեռքերը լուալ 2% կարբօլիքի (ֆէնիքի) թթուի ջրով :

Հիւանդը լաւանալուց յետոյ անհրաժեշտ է ջնջել հիւանդութեան ժահրը . սրա համար հիւանդին պէտք է լողացնել օճառով եւ յետոյ վերեւ յիշուած կարբօլիքի ջրով : Գլխի մազերը շատ կարճ կտրելուց յետոյ նոյնպէս պէտք է լուանալ գլուխը : Հիւանդին շորերը եւ անկողնի մասերը նոյնպէս պէտք է հականելիս . սրա համար թէեւ կան մասնաւոր գործիքներ (étuve de Geneste et Herscher) , որոնք ճնշուած տաք շոգիով փճացնում են միկրօբները , սակայն այդ գործիքները մասնաւոր տների համար ձեռնատու չը լինելնուն , խորհուրդ ենք տալիս այդ կարգի առարկաները հականելիս $1\ 0/00$ սիւբլիմատի ջրով (sublimé corrosif) , նրա մէջ թաթախել եւ յետոյ արեգակի տակ չորացնել : Իսկ հիւանդի սենեակը , մի եւ նոյն հեղուկով եւ փոշիացնող հասարակ գործիքով (pulvérisateur) հականելու է :

Այս կարգի հիւանդներ գարմանելիս, բժիշկներն էլ պէտք է զգուշանան , որպէս զի հիւանդութեան սերմը իրանց միջոցաւ չը փոխադրեն ուրիշ հիւանդներին :

Սակայն աւելի խելացութիւն է , քանի որ գիտութիւնը շնորհել է միջոցը, հիւանդութիւնը գոյանալուն դէմ աշխատիլ քան թէ հիւանդանալ եւ ապա միջոցներ փնտռել կեանքը վտանգից ազատ պահելու համար :

Հիներին ծանօթ էր , որ ծաղիկ հանող անհատը , զերծ է մնում երկրորդ անգամ ծաղիկ հանելուց , եւ ահա թեթեւ տեսակ ծաղկից առողջին փոխանցում էին արհեստական կերպով հիւանդութիւնը եւ անհատը թեթեւ կերպով ենթարկւելով այդ հիւանդութեան , վերջնակաւ նապէս պաշտպանւում էր :

Շատ հին դարերից 'ի վեր Չինացիք եւ Պարսիկները իրանց զաւակներին դնում էին թեթեւ տեսակով վարակւած հիւանդների մօտ , որպէսզի նրանց թեթեւ ծաղիկով վարակւեն իրանց զաւակները եւ պաշտպանւեն աւելի խիստ եւ ծանր տեսակների դէմ : Յետոյ սկսեցին թեթեւ ծաղկի ենթարկւածների վէրքերի հիւթը պատկիներով թեթեւ տեսակը փոխանցել :

Վրացիք , Չէրքէզք եւ Հայերը վաղուց ծանօթացել էին այս միջոցի հետ , որը ժի դարում տարածւեց նաեւ թաթարների , թիւրքմէնների եւ Հնդկների մէջ , եւ ապա Եգիպտոս , Բաղդադ եւ Բասրա :

Տաճկահայ գաւառներում , ինչպէս եւ ականատես եմ եղել , Հայերը ծաղկի չորացած կեղեւը չամրչի մէջ դնելով տալիս են ուտելու առողջ երեխային , որպէսզի թեթեւ ծաղիկ հանեն եւ ազատւեն ծանր տեսակներից : Այս մասին հանգուցեալ Դոկտ. Փեշտիմալճեան յիշում է

էրդրումի հայ գիւղերից մի քանիսը . իսկ ես յիշում եմ Փոքր Հայքի բազմաթիւ գիւղերը եւ քաղաքները , 'ի միջի այլոց Ակն , Տիվրիկ քաղաքները եւ Բենկայ գիւղը :

Սակայն քաղաքակիրթ երկիրներում երեխայից երեխայ պատկիներու այս միջոցը գրեթէ բոլորովին թողնւած է , որովհետեւ կասկած կար , որ ծաղկի հետ առողջ երեխային սիֆիլիսի , թոքախտի նման հիւանդութիւններ էլ փոխանցուեն : Թէեւ տակաւին Պարսկաստանում եւ Տաճկաստանում հետեւում են անդայի շարլատաններ այդ հին միջոցին եւ տգէտ ժողովուրդը մեծ մասամբ թողնում է կովու պատուաստը եւ դիմում է այդ խարերայ բժիշկներին :

Կովու պատուաստը (COW-POX) երեխաներին ծաղկի դէմ պաշտպանելու ամենալաւ եւ ապահով միջոցն է . որի գիւտը եւ ընդհանրացումը պարտաւոր ենք Ջէնըր անգլիացի բժշկին , որը թէեւ 19րդ դարից մի քանի տարիներ առաջ սկսած էր այդ գիւտով զբաղուել , սակայն պատուաստի ընդհանրացումը սկսում է ճիշդ 19րդ դարին եւ դրա համար այդ պատիւը վերագրում ենք 19րդ դարին . որովհետեւ 1800 թուականին պատուաստը Ֆրանսա մացրին Thouret եւ La Rochefoucauld-Liancourt եւ քիչ յետոյ այս գիւտից օգտուեցին Ա.սիա , Ամերիկայ եւ Ափրիկէ , եւ Ջէնըր ինքը 1801 թուականին Վուդվիլում 8000 անձեր պատուաստեց , որոնցից եւ ոչ մինը զոհեց :

Էդուարդ Ջէնըր ծնած է 1749 թ. ին Գլօչէստըրի կոմսութեան մէջ . իր ուսումը Լօնդօնում աւարտելուց յետոյ իբրեւ բժիշկ բնակութիւն հաստատեց իր ծննդավայրում , երբոր դիպուածը նրան դրաւ այն հրաշալի գիւտի ճանապարհին վրայ , որը այնքան մարդիկ մահից պիտի ազատէր :

Այս միջոցում ծաղիկը իշխում էր Անգլիայում եւ գրեթէ բոլոր վարակեղները մեռնում էին : Ջէնըր մի օր գիւղում ման գալու ժամանակ , այս սարսափելի աղետի վրայ առիթ ունեցաւ խօսակցելու մի կընոջ հետ , որը կովեր խնամելով էր զբաղւած : «Ո՛հ , ասաց կինը , այս հիւանդութիւնից ես չեմ վախենում , որովհետեւ այն ամենքը , որ ինձ նման կովեր կթելու կոչւած են , ձեռքերի վրայ պատուաստ են ստանում եւ այդ նրանց պաշտպանում է ծաղկի դէմ :

Կնոջ այս խօսքերը գիւղի համեստ բժիշկին խորհրդածել տուեցին . բազմաթիւ փորձեր կատարելով , նկատեց արդարեւ , որ այս երկրի կովարածներից ոչ ոք ծաղկի չէր ենթարկւած :

Ջէնըր իր գիւտը յայտնեց Լօնդօնի հռչակաւոր պրօֆէսօր Հընտէր բժիշկին , որ իր ուսուցիչն էր եղած եւ ուրիշ շատ երեւելիներին : Սակայն սրանք այդ բանին բնաւ հաւատք չընծայեցին , այդ նկատելով իբրեւ ժողովրդական , պառաւական մի դեղ :

Սակայն եւ այնպէս Ջէնըր չը յուսահատուեց , իր խուղարկութիւնները յառաջ տարաւ եւ 1796 թւին իր վճռական փորձը մի երեխայի

վրայ կատարեց , նախապէս պատուաստելով եւ յետոյ ծաղկի ժահրը պատկինելով , որը չը կարողացաւ ծաղիկ յառաջ բերել . ուրեմն , երեխան պաշտպանւած էր ծաղիկ հիւանդութեան դէմ :

Այս փորձից քաջալերւած , միեւնոյն գործողութիւնը կրկնեց միշտ միեւնոյն յաջողութեամբ եւ ժողովուրդը մի այդպիսի աղէտից փրկւելու յոյսով բազմութեամբ դիմում էր նրա Բէրքըլէյի պարտէզը :

Ձէնըր աշխարհի յայտնեց թէ կենդանիներ , մանաւանդ կովերի ստինքների ծաղկի պուտերու հիւթով երեխաներին պատկինելով պատուաստւած կը լինին , այսինքն կը պաշտպանուին ծաղիկ հիւանդութեան դէմ , եւ թէ պատուաստւած երեխաների վէրքի ժահրով կարելի է ուրիշներին պատուաստել :

1800 թւականներին ծաղիկը Պարիզում 10,000 զոհեր պատճառեց , որոնցից եւ ոչ մէկը կանխաւ չէր պատուաստւած :

Այս փորձերից յետոյ բոլոր սկեպտիկները Ձէնըրի դիւտին ճշմարտութեանը հաւաստացին եւ այսպէս պատուաստը ամեն տեղ տարածւեցաւ :

1802 թւին Անգլիոյ Պարլամէնտը Ձէնըրի 10,000 անգլիական ոսկու մի պարգեւ ընծայեց եւ 1807 թւին 20,000 ոսկու մի ուրիշ նուէր :

Այդ ժամանակներում , զարմանօք տեսնում էին , որ կառավարութիւնը գրամական պարգեւներով ճանաչեց այն անհուն բարիքը , որ պատուաստը ընծայելու էր մարդկութեան : Բայց ճշմարիտ ասած , Ձէնըր բոլոր պատւաբեր տիտղոսները միշտ մերժում էր , ինչպէս պատւանշան , պատւանուն , եւ այլն :

Ձէնըր վախճանեց 1825 թւին , ամբողջ մարդկութեան բարեւար մեծ տիտղոսը ընդունելով :

Ներկայումս պատուաստը կատարում են կամ ուղղակի կովից վերցնելով եւ կամ աւելի յաճախ , գործ են ածում գլխերինում պահպանւած պատուաստի հիւթը , բարակ ապակի խողովակների մէջ դրւած , որի երկու ծայրերը փակւած են ալկոլի լամպով :

Այսպէս պատրաստւած , հականելուած եւ պահւած պատուաստը միշտ զօրեղ է եւ ոչ մի վտանգ չէ ներկայացնում :

Պատուաստելու գործողութեան մանրամասնութեանց մէջ մտնել չենք ցանկանում , միայն կասենք , որ այդ գործողութիւնը պէտք է կատարել շատ մեծ մաքրութեամբ , այսինքն հականելիական կերպով : Պատուաստումը՝ բացի պատուաստի պատճառած փոքր վէրքից եւ դուրս տալուց , ուրիշ բորբոքման երեւոյթներ չը պէտք է ընծայէ . օրինակ թեւի ուռչիլ , վէրքի մեծանալ , եւն. , Ուրեմն , պատուաստելիք տեղը նախապէս պէտք է լուանալ հականելիչ ջրերով , օրինակ 2⁰/₁₀ բորիքի թթուի ջրով , նոյնպէս պէտք է մաքրել եւ հականելի գործիքը . գործողութիւնը վերջացնելուց յետոյ , վէրքը պէտք է ծածկել դեղաների մաքուր բամբակով (coton hydrophile) եւ թէնդիւֆով (gaze) : Կա-

րելի է նաեւ ծածկել բողբուջ գոմէի (baudruche gommée) կտորներով • մանաւանդ առաջին օրերում :

Ո՞ր տարիքում պէտք է պատուաստել երեխային : Եթէ ծանր արգելիչ պատճառներ չկան , նախապատուելու է առաջին երեք ամիսները • աւելի նախընտրելի են հինգերորդ կամ վեցերորդ շաբաթները : Սակայն կ'ասենք , որ կարելի է երեխային պատուաստել նրա կեանքի առաջին օրերից սկսած , որովհետեւ նորածինները շատ լաւ են տանում պատուաստումը , եւ այդ տարիքում պատուաստը գրեթէ միշտ բռնում է , մինչդեռ քանի տարիքը յառաջանալու լինի պատուաստ բռնելու յոյսը այնքան նուազում է : Այս պատճառով Gusserow նոյն իսկ խորհուրդ է տալիս յղութեան ժամանակ պատուաստել երեխային մօրը արդանդում , այսինքն մօրը վրայ կատարել գործողութիւնը եւ ազդել մանկան վրայ • սակայն պէտք է խոստովանիլ , որ այդ գործողութիւնը բնաւ ապահով եւ վստահելի միջոց չէ եւ երեխային ծաղկից չէ պաշտպանելու :

Ծաղկի համաճարակ եղած միջոցում անպատճառ պէտք է պատուաստել երեխաներին , սկսած ութերորդ օրից : Այս բանին հակառակում են տգէտ ծնողները , վախենալով , որ երեխան ծաղիկով կը հիւանդանայ • այս դաղափարը շատ սխալ եւ անհեթեթ է , պէտք է պատուաստել , որպէսզի երեխան ծաղիկ չը հանի :

Սակայն , ընդհանուր կերպով կ'ասենք , որ երեխային առողջ եղած ժամանակ պէտք է պատուաստել , այսինքն երբոր երեխան տկար է , շատ նիհար կամ որ եւ է մի հիւանդութեան ենթակայ , պէտք է սպասել , որ երեխան իր ցանկալի առողջութիւնը ստանայ :

Պատուաստումը երբեմն անկանոնութիւններ է ընծայում : Ասենք նախապէս , որ պատուաստը կարող է ազդել գործողութեան տեղում , մորթի վրայ ոչ մի հետք կամ նշան չերեւալով , կարող է դուրս տալը երկար ժամանակ ուշանալ :

Պատուաստումը շատ յաճախ անվնաս է եւ որ եւ է ըէակցիա ցոյց չէ տալիս : Սակայն , պէտք է նշանակել նաեւ , որ կարող է կենդանական ջերմութիւնը մինչեւ 40⁰ սէլցիուսի բարձրանալ եւ ջղացնցումներ (convulsion) պատճառել : Այս երեւոյթները ընդհանրապէս վաղանցուկ են , սակայն եթէ հարկ տեսնուի , պէտք է դարմանել : Ինչպէս վերեւում ասացինք , պատուաստած տեղում կարող են զանազան բորբոքումներ յառաջ գալ (lymphangite , adénite , érysipèle , gangrène) , սակայն այդ բանը կարելի է կանխօրէն արգիլել , գործողութեան ժամանակ եւ յետոյ մաքրութեան եւ հականեխական միջոցների դիմելով :

Յիշենք նաեւ , որ պատուաստը կարող է ընդհանրանալ ամբողջ մարմնի վրայ , որը սովորաբար որ եւ է վտանգ չի ներկայացնել :

Պատուաստումը ծաղկի դէմ անհատին պաշտպանում է , սակայն պէտք է գիտնալ , որ այս պաշտպանութիւնը , ախտազերծութիւնը

(immunité) տեւական եւ շարունակական չէ, եւ վերստին պատուաստումը, կրկնապատուաստումը միշտ օգտակար է, որովհետեւ պատուաստի ոյժը 7 կամ 10 տարի է տեւում սովորաբար. նրանից յետոյ պատուաստողը կարող է ծաղկով վարակել. սրա համար մարդս պէտք է պատուաստւի 7 տարին մի անգամ. մանաւանդ ծաղկի համաճարակ եղած ժամանակ :

ԴՈԿՏ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

Յ Ա Յ Տ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Մ Ը

Կը արանջեն Քրիստոնեաները,
 Ու տառապող ժողովուրդները կը ճշկուհան,
 Եւ կը հարցնեն.
 «Ո՞ւր է մեզի խոստացուած խաղաղութիւնը,
 «Ու մեր ոսկորները ե՞րբ պիտի հանգչին».
 Եւ կը ճշկուհան Քրիստոսի դէմ,
 Իրենց տառապանքներուն համար «վե՛րջ» աղաղակելով :

* *

Տիգրիսի հարաւային ափերուն վրայ
 Քաղզէացի հովիւները
 Բացօթեայ կանցընէին իրենց գիշերները երազանքի,
 Եւ աստղերուն ընթացքը կը դիտէին,
 Ու աստղերուն մէջ անցած դարձածը կը դիտէին :

Մեռեալ-Մովուն արեւմտեան կողմը
 Երկիր մը կայ կենդանի.
 Ուր հին Նեղոսը կը նորոգուի ամէն տարի :
 Նեղոսի հովիտներուն մէջ չարքաշ ժողովուրդ մը
 Փրկութեան կըսպասէր յուսակառոյց :
 Ու եղան մարդիկ ատոնց մէջէն,
 Որ Նեղոսի ջուրերուն մէջ նայելով
 Գուշակութիւններ կընէին
 Եւ աստղերուն ալ նայելով
 Քաղզէացի հովիւներուն տեսածները կը հաստատէին :

Նգիպատոսի մէջ մարդարէները
 Նեղոսի ջուրը կը նայէին,
 Եւ Բաբելաստանի հովիւները